


Fondateur

M. Mamourian

Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN

"ARÉVÉLIAN NAMOUL,"
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN



ՏՆՕՐԵՆ - ԻՄՔԱՂՐԱՊԵՏ

ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԲԱԺՆԱՆՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԱՐԵՐԱՆ 500 ՂՐԵ
ՆԵՐԱՍՏԱՆՍ 250
ԵՐԱՍՏԱՆՍ 150

Բաժանորդագրութիւնը կ'սկսուի
ամեն ամսոյ 1 ին և 15 ին

100 ՓԱՐՍ

ՕՐԱԹԵՐԹ ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐՍ

ԿԵՆՍՈՒՆԱԿ Է ՋԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Քանի մը օրերէ ի վեր քաղաքս հիւր կ'գտնուի Տ. Գրիգորիս վրդ. Պալաքեան որ վերջերս Բարիզէն գալով ուղեւորուած էր Կիլիկիա և այժմ կ'վերադառնայ Բարիզ, կրկին և վերջնականապէս հաստատուելու համար Կիլիկիոյ մէջ:

Այս տեղեկութիւններն և մեր ստորեւ պարզելիքներն կ'քաղենք երրորդ անգամ մը, որովհետեւ պատահութիւնն չունեցանք մտէն չգիտած ունենալու այդ եկեղեցականին հետ, որ ճանչնալու պատիւն ալ չունինք:

Գրիգորիս վրդ. Պալաքեան Բարիզի մէջ վերջերս սկսած էր հրատարակել «Նյա» անունով շաբաթաթերթ մը, գաղափարակից ու անկախ թերթ մը, որ այժմ մտադրած է փոխադրել Ատանայ հոն հիմնելով նաև ազգային տպարան մը, որու հիմնարկութեան համար հարկ եղած դրամազուլման արդէն տրամադրուած է Բարիզի հայութեան քանի մը անդամներուն կողմէ:

Բայց մեր ընկերքն այս չէ, այլ այն սրտապնդիչ, յուսատու և ուրախաբեր երեւոյթն որու ակնաստես եղած է Պալաքեանի Հայր Սուրբ Կիլիկիոյ մէջ, որ իրեն հիացում պատճառած է:

Այս տաժանքի ու սպառնալի նեղ օրերուն, զուլումէ ու կողպուած դեռ նոր ճողպարած հոյ ժողովուրդի ցոյց առած կենդանութիւնն, աշխոյժն ու աշխատութեան ու յամառ ճիգերու տեսարանն է որ երիտասարդ եկեղեցականին սքանչալուծ է պատճառը:

Կիլիկիոյ շրջանակին մէջ գտած է հոն հայութիւն մը, որ օրըստօրէ կ'ուռնանայ, կ'բազմապատկուի, հոն տիրող գործունէութիւնն, վերադարձող տաքաբիրներուն իրենց հորինական հոգեբուն տիրութիւնն ընելով անոնց մաքրուածը հողին հետ, վաճառականութեան եռուզեռն ու եռանդն, հողեր ու կալուածներ զննելու փափաքն ու կորովը, վերջապէս այն ամեն կարեւոր պարագաներն որ էական ու ոտիպողական պահանջներն կ'կազմեն կենսիկն:

Պալաքեան Հ. Ս. լաւատես է, կ'ինկարազրէ Ատանայի մէջ տաժանելի աշխատութեամբ լոյս տեսնող քանի մը թերթերու կրած չարաչար աշխատութիւնն, անդրջրեղեղեղան ձեռքի մեքենաներով և նախնական գործիքներով Հայոց գրաւած նախապատուութիւնն բոլոր միւս ազգերու վրայ, որոնք զերթէ տիրացած են բոլոր կարեւոր պաշտօններուն, իրենց լեզուաղիտութեամբ ու ճարպիկութեամբ:

Վերջապէս մէկ խօսքով Գրիգորիս վրդ. Պալաքեան շատ զոհ տպաւորուած քան մը կ'զառնայ Բարիզ, աստից աստիցն առիթով պիտի վերադառնայ ինչպէս լսինք հոն հաստատուելու համար իր տպարանն ու թերթը:

Այսպէս ուրեմն անգամ մըն ալ կ'հաստատուի որ հոյ ժողովուրդը, Էջմ կ'յաջողի ունենալ կենսիկ, պատիւի և ինչքի ապահովութիւն, երբ իր բնակարան երկիրն կ'զառնայ անդորր ու խաղաղ, անմիջապէս երեւան կ'բերէ իր ներքին ոյժերն, իր կարողութիւններն, իր յատկութիւններն, մէկ բառով իր կենսունակութիւնը:

Եւ խրախուսել ըլլալէ աւելի սփափել է հայուն այս ձիրքը, որովհետեւ անգամ մըն ալ իրայտ կ'բերէ, որ հայ տարրն ի ծնէ խաղաղասէր, աշխատութեան մէջ կ'փնտռէ իր սրտին ու հոգւոյն սնունդը, իր փառասիրութեանց ու բազմանշնորհութեան գոհացումը և երբէք ուրիշներէ չակնկալելու ձեռնառութիւն կամ օգնութիւն, ինքնիրեն բաւելով իր պիտոյքներուն ու կարօտութիւններուն:

Դարերու պատմութիւնն արդէն կ'ապացուցանէ մեզի, որ հայն, եթէ կըրցած է սոկալ ամեն տեսակ հալածանքներու և զուլումներու բռնութիւններու և կեղեքումներու, չնորհիւ իր բնածին կենսունակութեան կրցած է սոկալ, սրովհետեւ անմիջապէս որ յաջողած է փոքր ինչ անդորրութիւն վայելել, շանաղիք գտնուած է իր կորուստներու դարմանումովը և իր վիճակին բարեւալումովը:

Եւ դարերու ընթացքին միշտ միեւնոյն անսայթաք ընթացքին չնորհիւ կրցած է սոկալ և ապրիլ ու ապրեցնել հայ ազգը:

Ապագան շատ աւելի աչքառու կիրպով պիտի գայ հաստատել հայուն կենսունակութեան անմիջապէս անուրանալի ձիրքը և անոնք որ այսօր կ'սակարկեն մեր վրայ և շարունակ խնդրոյ ներք կ'ընեն մեր փոքրամասնութիւնն կէս դար վերջ պիտի ապշին ու մնան թէ՛ իրենց ափ մը կարծուած ժողովուրդ մը, ինչպէս կ'սկսուին ու տիրանան քայլերով յաջողած է, կարծ ժամանակամիջոցի մը մէջ, բազմապատկուելի, հարստանալ, բարգաւաճիլ և քաղաքակիրթ ժողովուրդ մը իր զիրքին վայելաւորը գրաւել:

Հ. Մ.

ԸՆԾԵՆԵՐԻ ՄԱՅՑ

«Պիւլըթէն Արմէնիէն»ի մէջ կը կարգամ. «Ալէքսանտրաբօլի կայարանն որ թուրքերու կողմէ փրցուած էր, վերաշինուած է, ինչպէս նաև բոլոր կայարաններն ընդմէջ Ալէքսանտրաբօլի և Երևանի»:

Չարմախի բան ինչ զրպարտու...

Թիւն, թուրքերը փրցնեն, կործանե՞ն միթէ հնար է, անպատճառ սխալ տեղեկութիւն հաղորդած պէտք է ըլլայ բարիգեան այդ ֆրանսահայ թերթին: Ուրախալի է սակայն որ թուրքերն առիթ չեն ունենար ձեռք անցնելու այդ «Պիւլըթէն Արմէնիէն»ը, ապա թէ ոչ անպատճառ հերքում մը պիտի գրէին ու զրկէին յիշեալ թերթին բողոքելով իրենց դէմ եղած այդ զրպարտութեան:

Հաւանականաբար այդ կայարանն շատ հինցած պէտք է ըլլար, և թե. թեւ վտանգ մը չպատահելու համար փրցուցած ըլլան, իսկ աւելի հաւանական է որ նոր մը շինելու մտադրութեամբ կործանած ըլլան, բայց յետոյ սահապարանով մեկնիլ պարտաւորուելով չեն յաջողած իրենց ծրարիքը գործադրել, որով յանցանքն շամաձայնականներուն վրայ կ'իյնայ որոնք զինադարի պայմաններով, սնունց անկից հեռանալը պահանջեցին...:

Իսկ եթէ այս մէջըրու միտք ալ չեն բուն պատճառը այդ կայարանին կործանման, ապա ուրեմն հայերն կործանած ըլլալու են, թուրքերու վրայ զրպարտութիւն մը ևս բարդելու համար...:

Այս մասին սպացոյցներ շատ կան, օրինակի համար, իզմիրի մէջ Պուլվար շինելու համար իրաւ է որ շէնքեր փրցուեցան, բայց զինադարուն վրայ գալով, խոյ Պուլվարին շինութիւնը կասեցնել պէտք եղաւ, իսկ զայն փրցնողներն դարձեալ քրիստոնեաներն եղան, Ամէլէ թագուրները, որով փրցնելու գործողութիւնն հայերուն, յոյներուն վրայ կ'բռնաւարուի, միևնոյն պարագան կ'նկարագրանայ Հրէից պերիզմանտան մասին ևս, ուր զրպարտող մը շէնքն սկսաւ շինուիլ, բայց ինչ օգուտ որ անիծեալ զինադարն արգելք եղաւ անոր վերջանալուն:

Մուսթաֆա Բէմալ չլսէ «Պիւլըթէն Արմէնիէն»ի ըրած վերադրումը, կարելի է միթէ ընդունիլ թէ՛ թուրքերն իրենց վեց դարու տիրապետութեան պահուն զրախտի չեն վերածած այս երկիրը, իրենք յանցանք ունին, եթէ ժողովուրդը չէ յառաջդիմած և ինքզինք կենդանի տեղ գնելով աւերիլ ուզած է, ասոր ալ յանցանքը կաւալարութեան վարիչներուն վերադրել պարզապէս զրպարտութիւն ու թշնամանք մը պիտի ըլլար...:

ԵՄ

Ա Ր Զ Ա Գ Ա Ն Գ

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ամենամեծ հաճոյքն ունինք արձանագրելու Պ. Վարդ Շապանեանի Օր. Տիգրանուհի Ա. Չիլիկիւրեանի հետ նշանախօսութեան բերկրառիթ լուրը:

Պ. Շապանեան թերևս անձանօթ մը ըլլայ իզմիրի հայութեան, սակայն ո՞վ որ ալ լսած է հանրածանօթ նկարիչ Բարիզ հաստատուած Պ. Շապանեանի համարը, պիտի ճանչնայ նաև անոր եղբորորդին Պ. Վարդը, Ռուսահայ ծանօթ վաճառականի որդին, որ պատերազմէն առաջ ուսանող մը եղած է էնթէնիէօր թէքնիք մը ըլլալու պատրաստակամութեամբ հազիւ տարի մը կարօտ ստանալու վկայականն, որ պատերազմի պատճառաւ կ'ընդմիջէր և միևնոյն պատճառաւ նաև Պ. Վարդի հակուսներն, որ լաւագոյն կը համարի իր հօր օրինակին հետևիլ և գործնական ասպարէզ մը նկատելու ճարտարագիտութենէ լաւագոյն՝ առևտրական ասպարէզը:

Պ. Վարդ Շապանեան նուրբ ճաշակով, փոփոկ զգացումներով ուսեռ, և զարգացած երիտասարդ մըն է, որ նոյնքան նուրբ, նոյնքան փափկիկ, սրտայոյզ ու սիրազեղ Օր. Տիգրանու-

հիի ուշադրութիւնն կ'առնէք և այդ դեռասի զոյգը զիրար կ'զանէ մին հողիւ 25 և միւսն 20 դարուններ թեւակոխած:

Օր. Տիգրան Ա. Չիլիկիւրեան իր կրօններ քրոջ՝ Օր. Պերճուհիի հետ հազիւ ամիսէ մը ի վեր է որ իզմիր կը գտնուին: Օր. Չիլիկիւրեաններն վաղեմի ծանօթներն են՝ իզմիրի հայ բարեկեցիկ ընտանեաց և անոնց մայրն՝ Տիլին Չապէլ Ա. Չիլիկիւրեան եղբորորդիին իզմիրցեաց ամեն ազգերէ յարգուած ու սիրուած Տօք. Պ. Կոստանյի և միևնոյն ժամանակ քորն մեր ողբացեալ և յաւէտ անմոռանալի բարեկամին՝ Արմայիս Ս. Կոստանյի Օր. Չիլիկիւրեան Յոնիական ափերու իրենց հօր՝ Արշամ Չիլիկիւրեանի՝ եղբորորդի հանրածանօթ վաստաբուն գրազէտ Գրիգոր Չիլիկիւրեանի, հայրենիքն այցելել յարմար դատած են իրենց ծնողաց արտօնութեամբ տեսնելու իրենց հօրեղբայրն, ազգականներն ու բարեկամներն, երբէք չմտաբերելով որ իրենցմէ անդրանիկն՝ իր ծնողական հայրենի հողին վրայ սըրտերու բաղխումի մը պիտի եմթարկուէր, անակնկալ և բարեգէպ առիթով մը՝ Պ. Վարդ Շապանեանի հետ և ծնողական արտօնութիւնն ևս պիտի փութայ իրենց իրենցուն ու փափաքանաց գոհացումն ու պատկուծեւետիլու:

Պ. Վարդ Շապանեան իր առեւտրական գործոց պատճառաւ այժմ կը բացակայի քաղաքէս և չքանի մը օրերէ յետոյ վերադառնալով պիտի ուղեորի հայրենիք՝ Պաթոս, իր սրտի սիրածին և անոր քրոջ հետ:

Խմբագրութիւնն՝ իբրև սերտ ու վաղեմի բարեկամ մը Ս. Կոստանյի և նոյնպէս՝ ազգական մը Չիլիկիւրեան ընտանեաց, ուրախութեամբ արձանագրելով այս նշանախօսութիւնն կը մաղթէ արտանց երջանկութիւն որքան բարոյական նոյնքան ֆիզիքական բերեմտանութիւններով օժտուած գեղաւոր սիրուն Տիգրանուհի և իր ազնիւ խոսեցեալին, իր յարգանքներն ներկայելով նաև Յոնիականէն՝ Ռուսական ափերն Պ. և Տ. Ա. Չիլիկիւրեանի:

ԵՐԱՇՏ ՏԱՐԻՆ

Յօդակալ՝ Շեքուհարեմ

Ամբան տապին, այն տարի, զիւղին աղբիւրներն համօրէն, ցամաքի էին ի սպառ...:

Մշակի անգուլ՝ աչքն յառա՞ծ երկընքին և երկարած շրթնէնքն իր անտղերուն, հողին համար, հողին համար քառատուն անգամ քունտուն «Տէր ողբի» կրկնեց հաւանտով:

Անդին հօտաղն անձկայրեաց՝ հօտին համար իր յղի՞ բազկատարած, հոգեխոյճ՝ «Առտառաշաւն» իր չունչով տարաւ հացուց միևնու ալքն ու խորքն երկնքին, ու հոն լայնաւ կողկողաղին, հեծեծաղին՝ հօտին համար իր անբարբառ, քառատուն անոնցմէ տալով ողջակէզ...:

Իսկ ժողովուրդն խռովայոյզ, իր խեղճ քահանային մօրուքն առած իր ամին — իբրև փոխանորդն ըլլար ան Աստուծոյ — ոսկնուրի մէջ գայն լուաց, և եթ զիշեր ամաճարն մէջ

հաւատարման, եթէր գիշեր մինչև լոյս հակում ապաստան գ կատարեց...

Ի զո՞ւր աստղերն — մտքաբերտ կուռ ականջներ — խոսքեր ու ցամաքի էին երկնի վրայ...

Մեղաւորներն այն տարի մեռան ծարաւ գիւղին մէջ... Ու գիշեր միանկարծ հողն իր կողերէն ցնցում կրեց անարկու և գիւղին մէջ եթէր ճամբու վրայ եթէր սկիւր հոսանք տուին աղի՝ այլ քաղցը չուրերու...

Առաստօ մեղք էր և Ազամ կուլա՞ր կողկողազին, հեղհողազին...

Եւ գիւղն, ըմպեց արցունք, և իր ծարաւն այսպէս ան յագեցուց...

Ս. ՃԻՉՄԷՃԵԱՆ

ԳԱՆՏԻ ՏԵՍԱՎՅՈՒԹԻՒՆ ՍԸ

ԹԱԼԵԱԹԻ ԼԵՏ

«Բրնէսան» Ազգայնագիտական «Արև» թերթին արտատպելով կը հրատարակէ գաղտնի տեսակցութիւն մը, որ տեղի ունեցած է Իթթիհատի վարչաներէն միոյն և Թալէաթի միջև զինադատարի նստիչներին Այս տեսակցութեան մէջ ոճրապարտ մեծ վէճերը անվերապահօրէն կը յայտնէր իր կարծիքները, որոնք կրնան լայնօրէն լուսաւորել Թուրքիոյ ներկայ կացութեան թաքուն պատճառները:

Ճիւղն Ապրիլի պէյ նոր հրատարակած էր «Վազիֆէ» (պարտականութիւն) անունը պարզ մը Այս գլխաբային երևումին օրը — 1918 Սեպտ. 20 — տեսայ Թալէաթը, որ կ'որթըններ խոր քունէ մը Գիտէք անշուշտ թէ ես Իթթիհատական եմ և իրեն հետ յարաբերութիւններ ունէի ինչօրէ, պահել մինչև այն օրը ուր ես գացած էի զինքը տեսնել, տակաւին իրեն հանդէպ սէր ունէի Այդ օրը զայն շղարգիւ կը գտնէի Այդ վիճակին պատճառն էր Նիւզնէթ Սապիթ պէյի զբաղը Թալէաթ իրաւունք ունէր Վեյ տարի է ի վեր ոչ միայն իրեն առարկութիւնը ըրած էին, այլ նաև թերթերու շոգոքորթ գնահատութեանց առարկան եղած էր: Ըմբռնեցի թէ որքան անսխորթիկ զարմացում մը ունեցած էր, և ուզելով հասկնալ իր մտածածը ըսի իրեն:

— Ի՞նչ կարեւորութիւն կրնայ ունենայ այդ պրակը, ինչ որ ալ ըլլայ դուք կ'ընաք արժեքները ձեր գաղափարները այս երկրին մէջ, անհանգիստ ըլլալու ոչինչ կայ: Եթէ ձեր առջև դժուարութիւններ յարուցանեն Եւրոպայ կ'երթաք հոն ժամանակ մը հանդիստ ընելու համար:

— Եւրոպայ երթալու չափ յիմա՞ր ծմ միթէ:

— Այն տոնն կը քաշուիք ձեր ապարանքը և քիչ մը վերջ կը վերակազմէք ձեր գահինը:

— Սիրելիս, ասոնք ամենքն ալ անցած քայլեր են, ասկէ վերջ այլևս չկայ Գերմանիա, ապահով եղի որ Գերմանիոյ միացանք որպէսզի Իթթիհատ Թէրապիան պահպանուի: Բայց մենք կորսուեցանք, Գերմանիա անհնարաբար վրայ է Այսուհետև Իթթիհատը ոչնչացածէ: Ժողովին մէջ պիտի ըսած ընկերներուս, որ լուծեն պատկանութիւնը: Անիկա այլևս մեռած է: Ինչ որ զիս կը ձանձրացնէ այն է որ այսօր կ'երևայ «Վազիֆէ»-ն և վաղը կրնան ուրիշ պարտաւորութիւններ իրարու յարողել: Անգամ մը որ եւրոպական թերթերը հոս հասնին կացութիւնս ճգնաժամային է:

— Այն ատեն, ի՞նչ պիտի ընէք: Եւրոպայ չ'ըք ուզեք երթալ:

— Ո՛չ հոն, ո՛չ այլուր: Նախկին մեծափառ Գերմանիան գոռութիւն չը պիտի ունենայ զիս պաշտպանելու հա-

մար: Ուր որ երթամ, կրնան զիս ձերախախտել և յանձնել: Ինչ որ պէտք է ընել, այն է Պօլսոյ մէջ պահուիլ, և կարծել տալ թէ փորձած եմ: Անմիջապէս պիտի քաշուիմ գործէն, և յետոյ կը վարուիմ գաշնազրին առնելով ձեռք ձեռք համեմատ, կ'ըլլայ որ, անգլիացիք կը պահանջեն զիս և իմ ընկերներս, հայկական հարցին պատճառաւ:

— Չպիտի գիտնան ձեր պահուած ըլլալը:

— Եւ միթէ ես չ'իմ ձանձար բուր անոնց նկարագիրը, որոնց ասնձիքը տարիներով ձեռքիս մէջ պահեցի: Անոնք չ'պիտի հասկնան և այնքան տանն որ ես հոս մնամ, կրնամ իմ բարակամտ ընել: Մտածէ քիչ մը, եթէ գրամ սամ, այս երկրին մէջ ո՞ր թերթը չ'պիտի գրէ ինչ որ ես կուզեմ:

— Սակայն կըսէք թէ չ'պիտի հետապնդէք այլևս իշխանութեան անցնելու համար: Քանի որ գիտէք թէ Իթթիհատը կորուսած է, ինչօրէ բաժնի կրճատները բարակամտի համար:

— Եթէ Սապահէտտինի խմբակը Եւրոպայէ գալ, վրաս պիտի յարձակի և ինձ հանդէպ եղած թշնամական հոստիքը պիտի տճի հետզհետէ: Մեր ժողովուրդը տպէս է հազու թէ 5-6 հոգի խմբակ մը կ'ազմեն, անոր կը յարի: Եթէ մամուլը չ'հանձնէ թերթերը Սապահէտտինի վրայ ոչ մէկ բառ պիտի արտասանեն (Այս կէտը մեզ կը յիշեցնէ ասկէ առաջ «Բէյտամ» խմբազարպիտին ըրած մէկ հարցումը, թուրք թերթերուն հետզհետէ շատ նալուն և անոնց ծախքերուն աղբիւրին վրայ: Եւ թուրք խմբազարպիտը կը հարցնէ թէ արդեօք ի՞նչպէս կը հայթայթուին անոնց ծախքերը, ՚ը կատի տանելով որ օրական հասոյթը հազու մէկ շորթը կը գոցէ օրական ծախքին...)

— Թերթերը ինչպէ՞ս կուզէք որ պաշտպանեն Իթթիհատը երբ զայն մեռած կը տեսնեն, բայց կը հիանամ ձեր կարողութեանց վրայ: Դուք պիտի գտնէք միջոց մը անոր զարման տանելու համար:

— Անշուշտ պիտի պնդեմ Միութիւն և Յուսուշիմութիւն գոմիթէին լուծումը: Այս վերջինը, յետոյ կը հազնի ուրիշ տեսնէ մը, և ուրիշ ձեռք մը, այն տոնն ամեն թերթ կրնայ զայն դերաւ պաշտպանել: Նոյնիակ եթէ զիս չ'պաշտպանեն ուղղակի, կառավարութիւնը պաշտպանելով, որ այդ նոր կուսակցութիւն պիտի բազմանայ, կարելի պիտի ըլլայ ապահովել հոնգիստ, Այս կէտը գիտնալով, համաձայնեցայ էնվէրին և ձեռնարկին հետ թերթերու կրճատ տալու համար: Բայց չեմ յուսար որ անոնք Պօլսոյ մնան:

— Ինչպէ՞ս պիտի հասնիք բուրթ թերթերը գոհացնելու:

— Սպիտակ գրամը եղած է սև օրերու համար:

— Բոլոր թերթերը միթէ կ'ընդունին գրամ:

— Տիմա՞ր ես դուն: Այս ժողովուրդին մէջ, օրագրողը, ինչպէս նաև հօճան կամ հոճին գրամին համար իրենց հոգին կը ծախեն:

— Հայ և յոյն օրագրողները ի՞նչ պիտի ընեն:

— Անոնք, Եւրոպայի հոգածութիւնը չ'հանելու մտօք, չ'պիտի բարձրացնեն իրենց ձայնը ոչ միայն իմ և ընկերներուս դէմ, այլ բոլոր Թուրքերուն: Կո այս նպատակով չ'պիտի ըլլայ մեզի:

— Իսկ մեր երկիրը ի՞նչ պիտի ըլլայ:

— Երբ որ իշխանութիւնը մեր փին մէջ առնիք, այս երկիրը արդէն մահուան դատապարտուած էր: Կը ցաւիմ որ այս վճիռին գործադրութիւնը իմ ատենիս հանդիպած է:

ՄԱՆԻՍԻ ԲՍՄԱՆՈՐԴԵՆԵՐՈՒՆ

Մեր Մանիսի բաժանորդներէն քանի մըներն գեռ չեն զրկած իրենց բաժնեգրիները, կ'իսնդուրի իրենց պարտքին հատուցումը փութացնել:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԷ

ԱԶԳ. ԿԵՂՐ. ՈՐԲՆՈՑԻ

Վարչական Խորհուրդս ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները որոնց համար հրատարակալ կը յայտնէ իր խորին շնորհակալիքը:

Table with 2 columns: Donor Name and Amount. Includes entries like 'Սիկին Վարդ. Սար Թագուորեան 25', 'Մարգար Օհանեան 25', 'Հեղինէր Գեղեցիկ Գեղեցիկ 5', etc.

ԿԱՐԵԻՈՐ ՎՐԻՊԱԿ

«Արեւելեան Մամուլ»-ի երէկի 2122 թուով հրատարակուած «Կրթական Բարեշրջութեան սերմանացան մը» վերնագրով յոդուածին մէջ տպագրական հետեւեալ կարեւոր սխալները տեղի ունեցած են:

Բ. էջ Բ. սխալակ վերէն սկսելով 37րդ տողին «Գրքագր» բառէն վերջ կը պակսի «-ը» բառը:

Բ. էջ Բ. սխալակ վերէն սկսելով 23րդ տողին մէջ հակասալիք բառէն վերջ կը պակսի «-ը» բառը:

Բ. էջ Գ. սխալակ 3րդ տողին մէջ փոխանակ հայ ստանդարտէն պէտք է ըլլայ հայ ստանդարտէն: Նոյն սխալին վերջին պարբերութեան մէջ պէտք է կարգաւ «հայագրական» այժմեայ «գրքագր»:

Քաղաքային, արևւոր. և պատմ. դատերու պաշտպանութեան, ինչպէս նաև ամեն լեղուէ պաշտպանութեան խմբագրութեան և թարգմանութեան համար դիմել:

ՎԿԱՅԵԱԼ ՓԱՍՏԱԲԱՆ

ԼԵՒՈՆ ԵՐԿԱՆԵԱՆՍԻ

Շիշէճիլէր, Բասաթ Անասթաս, Բ. յարկ, էնվէր պէյի գրասենեակը Արագ և խղճամիտ գործունէութիւն, չափաւոր վարձք:

Տնոկան Լուրեր

ԻԶՄԻՐԻ Հեղին Բարձր գոմիթէրութիւնը ուղղակի բարեօրէն յոյն դատաւորներու վիճակը, որոշած է անոնց թուականները բարձրացնել և այդ բարձրացումը պիտի կատարուի Հեղին կառավարութեան այս մասին ըրած կարգադրութեան համեմատ:

Այս բարձրացումը պիտի հաշուուի Սեպտ. ամսէն. և եթէ կարգ մը թուականութիւններ տնտեսապէս անկարող գտնուին, բարձրագոմիթէրութիւնը պիտի օգնէ անոնց:

ԿԸ ՏԵՂԻԿԱԼՆԵՆ Ինչ թէ, Այսրէնի գծին վարիչ հաշարապետ Ֆիլէթ և Պատահանէի գծին զին. օրակալն հրամանատար հարիւրապետ Սանայինի մասնաւոր այցելութիւն տուած են բարձր գոմիթէր Պ. Սթեփանաւսի և գրաւման բանակի հրամանատար զօր. նիտերի: Երկու երկաթուղիներու վարիչները անոնց շնորհակալութիւն յայտնած են, ծանօթ արկածին պահուն Հեղին քաղաքային, զինւորական և բժշկական իշխանութեանց բերած օգնութեանց համար: Հազարապետ Ֆիլէթ և հարիւրապետ Սանայինի երախտադրութիւն յայտնած են, վերոյիշեալ իշխանութեանց ցարդ տուած իրենց կողովին համար:

ԷՄԻՐ ԱԼԻՄԻ Կայսրանին մօտ, Սոմալի վերադարձող տարանքարած չոքիկաբքի մը վաճօնը գծէ դուրս ելած է: Վնաս չկայ, և վաճօնը կրկին գծին վրայ գրուելով, կառաչարը շարունակած է իր ճամբան:

ԼԱԿԱՏԵՂԵԱԿ աղբիւրէ կը տեղիկայնեն թէ Յուսուշիմ Ազգային դրամատունն մասնաճիւղներ պիտի ունենայ Իզմիրի, Այսրէնի, Էտեմիշի, Մազինի, Պերկամի, Այվալքի և Էրիքէնի մէջ, ասոնց կեդրոնն պիտի ըլլայ Չէզմէ: Մօտ օրէն անոնք պիտի սկսին գործառնութեան:

Այս մասնաճիւղներ իրենց հաստատման առաջին օրէն սկսեալ պիտի օգնեն հողագործներուն անոնց փոխատուութիւններ ընելով, որոնք ապահովուած պիտի ըլլան հեղին կառավարութեան կողմէ: Հեղին Ազգային գրամատունն իր ծրագրին մէջ ունի նաև լայն բրօքայական մը հողագործութեան ծաւալման համար:

Փոքր-Ասիոյ հողագործներուն գիտական դիւրութիւններ ընծայելու համար, Արեւիկաէն դնուած են երեք հազար հողային մեքիններ: Փոխատուութիւնները կատարելու համար, ցանկեր պատրաստած են իւրաքանչիւր շրջանակին մասնայատուկ:

Սակայն, այս տարուան ցանքին կա, ինչ չ'պիտի ըլլայ օգտագործել այդ 3000 մեքինները: Եզանակը անցած ըլլալով, Այս ամառուան հոնքցին և յաջորդ տարիներու այգիի, ծխախոտի և ձիթիի գիտական մշակումին համար մեծ օգուտներ կ'ապաստուի անոնց մէջ:

«ԲԵՅՕԵԼԻ» գրիթէ ամեն օր տողեր կ'ուղարկէ հրատարակին մէջ տիրող շարաշահութեան վրայ: Վերջին յոդուածին մէջ ան խտորէն կը բողոքէ ասն վարձերուն, մտի և անհրաժեշտ նիւթեղէններու արտակարգ սղութեան դէմ, և եթէ իրերու այս վիճակը շարունակուի, կ'ըսէ ան, բընակութիւնը անօթութիւնէն և ցուրտէն պիտի մեռնի: Պատկանեալ իշխանութեանց ուշադրութիւն կը հրաւիրէ, վերջ մը տալու համար այս ցանձարձակ վազքին:

ԻԶՄԻՐ հանդիպած է Պօլսոյ Փըրանասիան բարձր գոմիթէրութեան խորհրդական Կոմս Քլոզել: Պատերազմէն առաջ Կոմս Քլոզել պաշտօն ունէր Պօլսոյ Փրանասիան դեսպանատան մէջ: Եւ ասկէ երկու երեք օր առաջ կանչուած էր Բարիլէն, անշուշտ ներկայ գտնուելու համար իբր տեղեակ Արեւելեան խնդիրներու, թրքական հարցին խորհրդակցութեան:

ՏԱՆ վարձքերու խնդիրը Պօլսոյ թերթերուն համաձայն հետեւեալ կերպով կարգադրուած է: Տէրերը կրնան

Երեք անգամ աւելցնել 1916ի վարձագրիները չեն կրնար անմիջապէս պարպել տալ իրենց կալուածները: Այս կարգադրութիւնը թէ տուններու թէ վաճառանոցներու յատուկ է: Այս նոր օրէնքը անմիջական գործադրութեան պիտի գրուի և իստադրութեան կը դրուին մինչև տարի մը արժէք պիտի ունենայ:

ՔԵՆՏՈՆԻ ՏՐԻԿՈՆ
Կէր. 21 Դեկտ. 4. Ե. Ժամը 2.30ի
ԹԱՏԵՐԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՅԹ
ԱԻՆՐԱԿՆԵՐԻ ՎՐԱՅ
Ընկերային տրամ 4 արար
Հիշելու
ՇԻՐՎԱՆՁԱՏԷ
«ԶԱՐԹՕՆԲ»
Լուր՝ անհատ փութեան կազմ
Առաջին անգամ ըլլալով պիտի բեմադրուի իզմիրի մէջ Վարպետին հրաժեշտին առթիւ:
Տոմսերուն համար նշանակուած են հետեւեալ խիստ չափաւոր գիները
Լօծ 7ուկէս ոսկի, Ֆոթօյլ Ա. 1ուկէս ոսկի, Ֆոթօյլ Բ. 1 ոսկի, Պալքօն 75 դր. Կալլուրի 30 դր.: Տոմսերը կը ծախուին Հայնոց «Չարթօնք» գրատունը, Ֆրանկոց թաղ Փափագեան և Պարտիզպանեան վաճառատունները և թատրոնին կիջէն, ուր նաև կը թուազրուին ամեն օր և իրիկուան օր և է մէկ ժամուն:

Տօք. Գ. ԱՄԱՏԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
ԶՂԱՅԻՆ, ՄՏԱՅԻՆ և ՆՇՐԱԻՆ
ՀԻՄՆԱԳՈՒԹԵԱՆՑ
Նախկին շէք առ Բլիզից մտային հիւանդութեանց եւ Ա. օգնական Լոզանի համալսարանի շրջային հիւանդութեանց գլխիկներուն:
Նախկին բժիշկ Լոզանի Bois de Cery նահանգային, մտային հիւանդանոցին և դարմանատան:
Լոզանի համալսարանը աւարտելէ վերջ 5 տարի արուեստը կիրարկած է Զուիցերիոյ մէջ:
Կը դարմանէ ամեն տեսակ զգային եւ ներքին հիւանդութիւնները:
Հիւանդ կ'ընդունի բացի կիր. օրերէ, ամեն րժամը 10-12 և 3էն 5: Փինարը փողոց թի 3 Շարնօ Թաղ:

ՏՕՔ ԳԱԼԹԱՔՅԵԱՆ
ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷ ՎԿԱՅՈՒՄ
ՍԻՆԱԿԱՐԱԾ ԱՆՍԱՐԵԼԱԳՈՐԾԱԾ
Մանկաբարձ, կնիստարոյժ, եւ ներքին հիւանդութեանց մասնագէտ:
Ամենաարագ և վերջին գրութեամբ նարմանում: Հիւանդ կ'ընդունի ամեն օր իր բնակարանը, Հայոց թաղ Բրէնթան արձաբանին գիմացի փողոց թիւ 4: Իսկ կէսօրէն վերջ ժամը 2-5
Չարնօ Շտրհաւորի և Թապախանէ Անաստուրի գեղարանները:
Աղքատաց՝ ձրի, չորեքշաբթի և շաբաթ օրերը, Կ. Վ. 2-5 յիշեալ գեղարաններուն մէջ:

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՏԱՆ
Վարչութիւնը հասարակութեան կը տեղեկացնէ թէ՛ այսուհետև բաց է ամեն օր իրիկուան ժամը 5-8 և կիրոս ի օր 9-12:

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

17 Դեկտեմբեր 1919

Հայկական բանակի յաջողութիւնները Թուրքերու դէմ ԿԱՏԱՂԻ ԿՈՒՒՆԵՐ

Ստոյգ տեղեկութեանց համեմատ հին Ռուս և սանձակաւ սահմաններու վրայ վերջին օրերս լուրջ ընդհարումներ տեղի ունեցած են Հայ զօրքերու և զօրաւոր տանկական գունդերու միջև որ կը պատկանին «Աւլը» շրջանակի մէջ:
Մինչև հիմա հասած հեռագրիները հայկական բանակին յաջողութիւնները կը ծանուցանեն: Հայ բանակը կատարի կռիւններէ վերջ շատ զօրաւոր դիրքեր գրաւած է, վանելով թուրքերը այդ տեղերէն:
Նահանջող թուրք զուգերուն օգնութեան փութալու համար, Էրզրումի և Տիարպէթի զօրաբանակներէն օգնական ոյժեր զրկուած են: Նոյնպէս հազարաւոր զէնքեր զրկուած են որ լաթուրի շրջակայ գիւղերու թուրք բնակչութեան:

Եղած առաջարկները Ամերիկայի

Մօրկէնթաուի և բրօքէնթօր Պաքլէրի և Պրաւուրի կողմէ նախագահ Ուիլսոնի մատուցուած իշխողակազմը կ'առաջարկէ թրքական կայսրութիւնը երեք քօտի բաժնիկ որոնց վարչութիւնը յանձնուի Մ. Նահանգաց մինչև որ այս մասերուն մէջ գտնուող ժողովուրդները կարենան ինքզինքնին կառավարել:
1.— Թուրքիոյ կեդրոնական նահանգները պէտք է բաժնուին սերիլ տէրութեանց:
2.— Սուլթանը պէտք է պահէ իր կրօնական և քաղաքական գերիշխանութիւնը Անատուրի թուրք ժողովներին վրայ՝ յանձնակատար տէրութեան իշխանութեան ներքև, իր մայրաքաղաքը փոխադրելով Գոնիա կամ Պրուսա:
3.— Անատուրի ոչ մէկ մասը ոչ խտակական և ոչ ալ յունական քօթերով տակ դրուի մինչև իսկ յանձնառութեան ձեւով:
Վերոյիշեալ երեք քօտիները պիտի ըլլան
1.— Պօլիս և շրջակայքը
2.— Թրքական Անատուրի
3.— Հայաստան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ

Հօնտօնի մէջ խորհրդակցութիւնը տեւած են երեք օր, անցեալ շաբաթ օր իրիկունը ի պատիւ Քլէմանսօի հասցիերով մը արուած է և կիրակի օր առաւօտուն Բարիզ մեկնած է:
Այս առթիւ Հոնտօնի մէջ հետեւեալ գեկուցը հրատարակուած է, «Անգլիոյ հրաւերին վրայ Մ. Քլէմանսօ և նախարարապետ Լոյտ Ճօրձ, ինչպէս նաև միւս նախարարները ստեղծութեան մը համար անցեալ հինգշաբթի օր Հօնտօն եկած են, խորհրդակցական նիւթ եղող խորհրդներէն մեծ մասը, տնտեսական ըլլալուն, արուեստից վերակենդանացման նախարար Լօչէր խորհրդակցութիւններուն մասնակցած է: Հօնտօն գտնուող Իտալիոյ արտա գործոց նախարար Սիալօթիա, ինչպէս նաև Ամերիկայի և Ճաբոնի գեսպաններուն ալ ներկայութեանը Ազգիականի խնդիրը ձեռնուած է: Անկախ վիճակի մէջ գտնուող միջազգային խնդիրներուն և առնց կարգին ի մասնաւորի Թուրքիոյ հաշտութեան մասին հետեւիք ուղղութիւնը որոշուած է:
«Այս առթիւ» բոլոր առկախ խնդիրներն լուծուած ըլլալով երեք օրուան խորհրդակցութեանց միջոցին համաձայնական տէրութեանց միջև տիրող համարախոսութիւնը ամրապնդուած է:

ՅԱՅՏԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. Լոյտ Ճօրձ հասարակաց Խորհրդարանին մէջ, Հօնտօնի համաժողովին որոշումները պիտի յայտարարէ, նոյն պիտի ընէ Մ. Քլէմանսօ Ֆրանսական խորհրդարանին մէջ: Անգլիոյ և Ճաբոնի նախարարները Հօնտօնի արդիւնքներէն գոհ են:

ԶԵԿՈՒՑԱԳՐԻՆ ՅԱՆՁՆՈՒՄԸ

Համաձայնականներուն վերջին ծանուցագրին ի պատասխան Գերմանիոյ խմբագրած պատասխանը, Գերման պատուիրակներուն հասած է և յիշեալ պատուիրակներուն կողմէ, այսօր ընդհ. քարտուղար Տիւթէսթաէ պիտի յանձնուի:

ԻՏԱԼԻՈՅ ԱՐՏՔ. ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ

Իտալիոյ արտաքին գործոց նախարարը Հօնտօնէ Հոմ վերադարձած է:

ՍՊԱՆԻՈՅ ԴԱՀԼԻՃԸ

Սպանիոյ նոր դահլիճը Սալտաթի վարչապետութեան տակ կազմուած է, արտաքին գործոց նախարար եղած է Տիւլէմա:

ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Լոյտ Ճօրձ ընդհանուր պատերազմի մէջ ոճիրներ գործողներու լատուկ ցանկին կազմուած ըլլալը և հաշտութեան անմիջապէս վերջ իրենց յանձնուող պահանջուիլը յայտարարած է:

ԹԻՓՂԻԶԻ ԳՕՆՓԷՐԱՆՍԸ

Հայաստանի, Ատրպէճանի և Վրաստանի նախարարապետները երեք տէրութեանց միջև առկա մնացող կարգ մը հոգային խնդիրներու լուծման և

Յ. ՓԻԼԱՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Արտաժող եւ ներածողներ
ՅՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ
92 LEXINGTON AVE., NEW YORK
TELEPHONE: MADISON SQ. 5613

Ձեր նիւ Եօրք հասնելուն ուղղակի մեղի դիմեցէ՛ք՝ ապահովելու ձեր սովորած և անցաքիրը, ինչպէս նաև ձեր աշակցութիւնը մենչև ձեր քաղաքէն մեկնելը:
Եթէ երկիր դրամ զրկել կուզէք, հոս մեզ կը զրկէք դրամը, ու մեր մասնաճիւղերը հոն կը վճարեն ձեր ուզած հասցէին:
Ունէ տարանք, աշխարհիս որ կողմը որ կուզէք զրկել, մենք ձեր հաշույն կը գնենք ու կը զրկենք, և կամ ձեզ կառաջնորդենք հայթայթող զլխաւոր կեդրոնները, ուր կրնանք թէ՛ աժան և թէ՛ մեծաքանակ ապրանք գնել:
Աշխարհիս ունէ կողմէն ապարանք կընդունինք Ամերիկայէն զրկելու համար, իսկ Պօլսէն, Իզմիրէն և Եգիպտոսէն ուզած ապրանքները կրնանք բերել տալ:
Ապրանքի մը գինը, զրկելու ծախքերը, հրապարակի կացութիւնը, դրամական սակը եւայլն կրնաք մեզ հորցնել և այդ մասին տեղեկութիւններ ստանալ:
Եթէ նիւ Եօրք կամ շրջակայքերը գործ կամ խնդիր մը ունեք, և անձամբ չէք կրնար գալ, կրնաք մեզ փոխանորդ կարգել:
Աւելի մանրամասնութեանց համար դիմել արձամբ կամ նամակով վերոյիշեալ հասցէին, իսկ իզմիր Աւետիո Փիլաքեանի:

Մ Ե Տ Օ Ք Ա Ջ Ի Օ Ն

Յ. ՊՕՍԹԱՆՃԵԱՆ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ **ՍՏԱՑԱԾ Է**
ԱՄԵՐԻԿԱՆ ՅԱՅՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԷ՛
Մանկավարչիկ Անտանուրեանի
Կանանց շրջ մանկներ
Կանանց քօթիւմ-թայտոններ
Արանց բալթօններ և քօթիւմներ
Ամերիկեան կալօշներ
Հովանոցներու զանազանութիւն
Անգլ. նորածու մուշամպա վերարկուներ
ԳԻՆԵՐԸ ԱՆՄՐՅՆԻՐ
Շիշեկիլեր փողոց թիւ 58
ԻՋՄԻՐ

ՎԵՐՋԱՊԵՍ

Հասան այնքան ասեմե իվեր անհատներու քանիք սպասումս՝ տեղեկանալի և ԶԵՆԻԹ Ժամացոյցները :



ԿԸ ԾԱԽՈՒԻՆ՝

ՎԱՀԱՆ ՉՄԻՒՆԱԿԱՒԵԱՆՆԻ

վաճառատներ ի Չուխա Պէտեւրեան, քիւ 13 - 15 :

Ընդհանուր ներկայացուցիչ իզմիւրի, Գոմիայի, Պրուսայի, Ասամիայի Անհատներուն եւ Արշակապետի կողմից :

Կը ծախուին նաեւ անեւ Եւ ժամացոյցներուն հոյ :

ՔԱՐԱՊՈՒԹՈՒ Գ. ԵԱԳՈՒԷԼ

ԵԱՆՏԷՎԻ ԽԱՆ 7

(Փէշաիմալըւար պաշտ)

Անոնք որ կ'ապագային Չամիչի կուտ ոգի գործածել, անտրտ մաքուր և խնամով պատրաստուած, թույլ զինքն վերելի հասցէին, թէ մեծաքանակ և թէ փոքրաքանակ գնումներու համար :

Գինը Մէն ՄԻ՝ Օնալի 50 ՂՐՇ :

Անհատատար զին մը, որովհետեւ այս ըմպելիին արտաձուլեան համար պատրաստուած է, բայց արտաձուլարի շրջապատ տեղույս վրայ վաճառել սրտուած է այս աժան գնով :

ՊՈՂՈՍ ԿԱՎԱԶԵԱՆ

ՆՇԱՆԱԳԻՐ (ԱՆԿԵՆ)

ԱՎԻ ԿԵՆՆԻ ԼԵՂԱՆԵՐԻՆ Ե ԳՆԵՐԻՆ

Նաև ապագային Վրայ

Վաղածանօթ այս վարպետը տարազանքներէ հասած քաղաքս գործի սկսած է, թէ ճաշակաւոր և թէ աժան գիներով գոհացնելու պատրաստ յաճախորդները : Փախաքողք զինքն Եւստուֆի բաժան, Պ. Մաթիկեանի տպարանն ուր կը գտնուի :

ՍՊԻՆՈՒԼՍԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դեմ. NATIONAL UNION SOCIETY LTD. LONDON

CENTRAL INSURANCE CO. LTD. LONDON

Ծովային. PHOENIX ASSURANCE COMPANY LTD. LIVERPOOL

Գինեղ մանրամասնաբեանց հաւար. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՍԻ Լ.ԵՒ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Թերթիս ծառայը արեւի ընդարձակուած ըլլալով, այժմ ի վիճակի եւն արեւի շայն տեղ մը տալ ծանուցմանց բաժնիս, մոյնիսկ երբ անեւ որ հարկ ըլլայ միեւնոյն ծանուցումն կրկնել, ինչ որ ասկից առաջ ի վիճակի չէիմք ընելու :

Գոհացուցիչ պարնաններ փոքր կամ մեծ, մէկ կամ արեւի ծանուցմանց հաւար :

Գինումներ կ'ընդունուին] առաւելեւ միևնոյն կես գին :

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՄ

ԹԵՆՏՈՐՈՍ ԲՍԱԽՆՈՒՏԻՍ

ՋՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՂՆԻՔՆԵՐ

Ջրարուժութիւնը մորթը կը մաքուրէ, արտաշնչութիւնը կ'ազդեցնէ արեան շրջանը կը փութացնէ և մարմնոյն անգամայոյժ մասերուն ոյժ և առողջութիւն կը պարզէ :

Լոգանք ծծմբային պարէզ Բիւնաթիզմի հմր.

ստղ ու պողպատը կիներու և այրերու համար առողջութիւն է :

Աւելի զիւրութիւն և հանգստութիւն ապու համար բաժնած ենք կանանց բաժնիւ թիւ 19ի շէնքը արանց » » 82 »

Հաստատութեանս բժիշկներն են՝ Տօրթ. Բէթրոս Բօլիբրաթիս և Տօրթ. Սարգիս Դալթակեան :

ԿԱՀԱԳՈՐԾ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ (Ս. Ստեփաննայի փակին մէջ)

Հիւանութեան և կահագործութեան արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր վերջին կատարելութեամբ կը շինէ, կ'ստանձնէ ամեն տեսակ յաճ նառութիւններ :

Մաքուր և խնամեալ գործ : Գիները չափաւոր :

ՏԻԳՐԱՆ Ա. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ՊԱՆՔ ՕՐՈՍՄԱՆԻ ԴԻՄԱԾ

ՎԱՀԱՆԱՏՈՒՆ ԿԱՅՆՆԵՐԱՆ

Հասած են և հեղեղեալ կը հասնին բուն Փրանս. կաշիներ մեծաքանակ վաճառում ՆԱՍՏԱՏՈՐ ԳԻՆԵՐ

ՅՊԱՐԱՆԻ ԱՐԱՄԻԹԻՅԱՆ ՀԵՄՆՈՒԿԵ 1888ԾՆ
ՏՊԱՐԱՆԻՍ ՄԵՂՈՒԹԻՅԱՆ
ՍԵՍՏԱԿՆԵՐՈՒ ՊԵՍՊՈՒՄՈՒԹԻՒՆ
ԱՄՍԵՆ ՏԵՍԱԿ ԳՈՅՆՍԵՐՈՎ
Մամուր եւ խնամեալ գործ օրուան զինքնու վրայ
Տպարանս բաց է առաօտե միևնոյն կես գիշեր
խնդրանքներու հաւար
ՎՃԱՐՄՈՒՆՔ ԿԱՆԽԻԿ

Մ. Յ. ԲԱՐԹԻԿԵԱՆ (13)
ԼԵՆԱՐՏԱ
ՊԵՏՐՈՍԱԹԵՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՍՈՒ
ԼԵՆԱՐՏԱ. — Ո՛չ, չեմ գանգաւոր. երբ քեզ կը տեսնեմ ու կը լսեմ, երբ դուն քովս ես : Կ'արժէ զին մը յատկա ցնել : Անձնատիրութիւն ըր վայրկեան մը խորհելով թէ զինը խիստ բարձր էր : Դուն կեանքիդ վարնան մէջն ես, իսկ ես...
ԱԱԿՕԹ. — Դո՛ւն : Ի՞նչ պակասութիւն ունի կեանքդ :
ԼԵՆԱՐՏԱ. — Կ'սկսեմ խորհել թէ կեանքս լրացած է :
ԱԱԿՕԹ. — Դո՛ւն կեանքդ կեանքդ լրացած է : Ո՛չ, կը վառացնես զիս այդ տեսակ բաներ ըսելով :
ԼԵՆԱՐՏԱ. — Խիստ երջանիկ եմ, խիստ երջանիկ եմ այս բոլորին համար : Հաւատա՛ որ այսպէս է : Սակայն զիտես թէ...
ԱԱԿՕԹ. — Գիտեմ թէ որքան անաւիրօքն ու անհասկնալիօքն փոխուած ես :

ԼԵՆԱՐՏԱ. — Գնա՛, գաւազն ու հո ըր զինք :
ԱԱԿՕԹ. — Որքան քաղցր կը հնչէ այդ : Ետ բեր : (Կ'եղէ, կը կենայ) Ծնորհակալ եմ, սիրելի՛ս, անուշիկ սիրական մօրաքոյրս : (Դուն կը վազէ : ԼԵՆԱՐՏԱ. աթոռի մը վրայ կիտնայ՝ սեղանին քով և գլուխը ձեռքերուն մէջ կը թաղէ : ԱԱԿՕԹի ձայնը կը լսուի դրօշն. — «Այո՛, եկո՛ւր» : ու Հակարթի պատասխանելը. — «Ի՛րա՛ս կ'ըսես») :
ԱԱԿՕԹ. — (Հոկարթի հետ ներս գալով) Առաջ եկուր (ԼԵՆԱՐՏԱ. ոտքի կ'ելլէ, աչքերը կը կուրցնէ ու ժպտով մը կը զիմաւորէ զանոնք) : Մօրաքոյր՝ անա հո՛ս է :
ՀԱԿՊԱՐԹ. — Տե՛ս :
ԼԵՆԱՐՏԱ. — Ներէ՛ ինձի :
ՀԱԿՊԱՐԹ. — Ի՞նչ : Գո՛ւր ինձի ներելու էք : Կարող չ'եղայ ներողութիւն խնդրել ձեզի : Ես...
ԱԱԿՕԹ. — Այդ մասին ուրիշ առիտ կրնաք խօսել թող մօրաքոյրս քեզ թող զիտէ հիմա :
ԼԵՆԱՐՏԱ. — Ձեր երկւթը ցէք յուսախաբար զիրար : Կը տեսնեմ այդ բանը :
ԱԱԿՕԹ. — Սքանչելիօքն քաղցր էք, մօրաքոյր :

ԼԵՆԱՐՏԱ. — Այո՛, սիրեցէ՛ք զիրար : Մի քիչ զեղեցկութիւն, մի քիչ շերտութիւն, մի քիչ երանգ բերէք այս ցուրտ յարկին :
ԱԱԿՕԹ. — Ո՛չ, մօրաքոյր...
ԼԵՆԱՐՏԱ. — Երբէք համբուրած ե՞ս զինք (ԱԱԿՕԹ մի քիչ կը հեռանայ ՀԱԿՊԱՐԹէ) Օ՛ն ուրեմն համբուրուցէ՛ք (կողջագուրուին) :
ԱԱԿՕԹ. — (ՀԱԿՊԱՐԹէն ԼԵՆԱՐՏԱ. սայի վազելով) : Սակայն, ամենասիրելի մօրաքոյր, կու՛ստ :
ԼԵՆԱՐՏԱ. — Մի՛ տանջուի ինձի համար : Մօրեղբորդ Եպիսկոպոսին - խօսեցա՛ր այս մասին :
ՀԱԿՊԱՐԹ. — Ո՛չ, տակաւին :
ԼԵՆԱՐՏԱ. — Չ'ըսե՛ր : Լա՛ւ, վախճում տակաւին առջև խնդրին դժուարազոյն մասը ունիս :
ՀԱԿՊԱՐԹ. — Ո՛չ, հիմա որ մինչև հոս յաջողեցայ ո՛չ մէկ բան կըրնայ արգելք հանդիսանալ ինձի ասկէ վերջ :
ԱԱԿՕԹ. — Կը լսե՞ս մօրաքոյր :

ԱՐԱՐ Բ.
(ՏԵՍԱՐԱՆ. — Սեփեակ մը ԵԳԻՍԿՈՒՄՈՒՍ տան մէջ, մի քանի շաբաթ վերջ : Սեփեակին հակե կողմը դուռ մը որ կ'առաջնորդէ արեւի մեծ սենեակ մը : Ուղակի՞ հան պատին վրայ ուրիշ դուռ մը, պատահաններ ձախ կողմը Պինդ առաջ, պատահաններ մէկուն քով խոշոր շարժաթոս մը : Աւելի հետը գրասեղան մը և աթոռ մը : Աջ կողմը դրան մօտ, բազմոց մը և պատին երկայնքին շարուած աթոռներ : Եպիսկոպոս մը կը նստի բազմոցին վրայ : Հակարթի հետ խօսելու վրայ է) :
ԵԳԻՍԿՈՒՄՈՒՍ. — Սիրելի՛ս Հակարթ, շարունակ կըսես թէ համազուններուց համաձայնէ որ գործեցիր : Ես լաւ կուզեմ արգելել որ ես ալ իմ համոզումս համաձայն վարուիմ :
ՀԱԿՊԱՐԹ. — Հօրեղբայր, զիտէք որ ամբողջ խնդրանքս բոլոր զինք տեսնելու ու հետը խօսելու է :
(Երբեմնեկ)